ները փոփոխակի տանը կառավարութիւնը կ'ընէին, իսկ նիւթական աշխատութիւնները այն վերոյիշեալ աղախիններուն կը յանձնէին։ Ամենքը մէկ-տեղ սեղանի կը նստէին ընդարձակ սրահի մը մէջ. եօթը եղբարքը և վեց կանայքը և հասակով մեծ որդիքները մէկտեղ կը նստէին սեղանի իրենց ծնողացը հետ. իսկ զզուիկները որոնք յիսունէն աւելի էին, նոյն միջոցին ուրիշ սեղան մ'ալ անոնց կը դրուէր սրահին մէկ անկիւնը՝ հօրերնուն, մօրերնուն և հօրեղբարցը աչքին առջև, և մեծահասակ քոյրերնին իրենց կը ծառայէր։ Մեծերուն սեղանին վրայ օտարականներ չէին պակսէր, որովհետև այս տունը հասարակաց պանդոկ մըն էր գիտուն և հարուստ անձինքներու համար՝ որոնք Մոտէնա քաղքէն կ'անցնէին. շատերն ալ անձնական կու գային այս ընտանեաց կարգը և միաբանութիւնը տեսնելու, զորոնք տեսնելով շատ կը հիանային։ Իսկ եօթն եղբարքը, դատարկապորտ և ախտաւոր մարդիկ չէին, վասն զի մէկը բժիշկ էր, միւսը դատաստանարանի պաշտօնեայ, միւսը դեղավաճառ, մէկը ատուի ծախող, մէկն ալ մատակարարութեան հոգը իր վրան առած էր, միւսը գեղը կ'աշխատէր և մէկն ալ քահանայ էր։ Թէ որ երբեմն ստակնին չի բաւեր, իրենց բռնած կարգովը և արթուն մատակարարութեամբը մեծամեծ ծախքեր ալ կը լեցնէին։

Լոնտրայի ստորերկրեայ երկաթուղին.

Լոնտրայի պէս բազմամարդ և գործունեայ մայրաքաղաքի մը չէին բաւեր իրեն անթիւ և նորահնար կերպով շարժող կառքերը. այս բանիս դարման՝ մը-տածուեցաւ ստորերկրեայ երկաթուղի շինել՝ որ մայրաքաղաքը ծայրէ 'ի ծայր կտրէ նշանաւոր փողոցներուն տակէն անցնելով։ Անգղիացւոց անգամ՝ որ յանդուգն և բազմածախ են իրենց գործոցը մէջ՝ անտեղի երևցաւ սկզբան այս մտածութիւնս. բայց վերակացուները և ճարտարապետները մէկդի դրած հասարակաց կարծիքը՝ գործողութեան ձեռք զարկին. 1863ին յունուարի 9ին ճամբան բացուած՝ և անունն ալ առած էր. փողոց մայրաքաղաքի։ Յետոյ շուտով պառկեցաւ հասարակաց միտքը գործոյն կարևորութեանը և օգտակարութիւնը վրայ, գլուխները բռնկեցան, աշխատութիւնը շատցուցին և երագեցին, և այսօրուան օրս ստորերկրեայ երկաթուղւոյն շոգեկառքները անդադար շարժման վրայ են։

Երկաթուղւոյն կամարներուն մէջտեղուանքէն ծակեր թողուցած են օդափոխութեան և քիչ մը լուսաբերութեան համար. իսկ բուն ճամբան լուսաւորողը շոգեկառքն է. կաղին ընդունարանը հետը առած՝ մասնաւոր խողովակներու ձեռքով կառքէ կառք կը հաղորդէ կազը։ Ծուխը և շոգին առանց դուրս ելլելու գործիքին մէջ կսպառին։ Ամենայն դժուարութեանց առջևն առնելէն ետքը՝ սովորական երկաթուղեաց պէս ալ կատարելագործուած է։

Երկայնքն է 4 մղոն անդղիական. ընթանալու միջոցը 25 վայրկեան. եղած ծախքն 1,300,000 լիրա ստեղին՝ երկաթուղւոյն բազմաճիւղ ըլլալուն համար։ Ընթացք կայ որ ժամը մէյմը կ'ելլէ ու կ'երթայ առանց կանգ առնելու, կայ ալ որ իւրաքանչիւր կայանքի դիմաց կը սպասէ. առաջին, երկրորդ և երրորդ աստիճանի կառաց գինը 6 փէնիէն կ'իջնայ ինչուան 2 փէնիի։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ